

վերանորոգելու. մեծապես նպաստեց ինծի հայե-
րէն թարգմանութիւնը: Այսօր սովորաբար կը
տարակուսուի թէ այն գիրքը արդեամբք փրկուի՝
է: Համարձակեցայ ապացուցանել որ այն գործքն
առանց տարակուսի փրկուի վաւերական գործքն
է: Գրութեանս վերջը պիտի կցեմ հայերէն
բնագիրը:

“Էջմիածնի Մատենադարանին այն՝ հըռ-
չախաւ որ ձեռագրին մէջ, — այն՝ որմէ գտայ
առի “Արխան երկրու”¹ վերնագիրը, — այժմ
գտայ նոր եւ բոլորովին անսովորական բնագիր
մը Ս. Թովհաննու Աւետարանին Ը 1—11 տ-
ղերուն, զոր ապահով եմ թէ Պապիասէն կամ
“Աւետարանէն որ ըստ Հրէից” առած են Հայք:
Ահա այս բնագիրը:

“...ի գլխիւն ու յաւել:

Այն առ շարժեցաւ ի լարէն որո՞ւ մէջն էին
վիշիւն ին ժառանգորդ է. աշին առ յո. ին ղէն
հրաժեշտէ, զի լարեմտեցն շնորհ. պարտեմն
նո յո. եւ ուն. Երեմիա դուր որ մեկըդ է, որդի
տալն եւ տալն աբադէ. եւ ինչ ինչ արեցեցեալ
դէլն էն գրէր հաւորն ի վերջ երկրի. Բոցայտել
շնորհ նոցա, եւ տեսնէին վերադառնալ մեզ ի վե-
րայ տալն: Եւ տալն ինչ քննէին եւ ուն ու ծոց-
բոց զի մշին: Անէ յո. երբ ի Բաղդադէն եւ
հաւոր զաղաղաբն լուսն մեզ, որդեա յաւելն նոցա
գրեալ է:”

Այս բնագիրը շատ հին կը համարիմ.
վասն զի արդէն Գր. Նարեկացի, որ Ժ 7-րորուն
ժողովեցաւ, իւր “Երգոյն երգոց” Մեկնու-
թեան մէջ պնդէս յառաջ կը բերէ (շնացող
կնոջ մասին) բնագիրը՝ ինչպէս որ կայ այժմ
հայերէն Ս. Գրոց ձեռագրաց մէջ: Եթէ իմ նոր
բնագիրս Պատմատուի Եւսեբիոսը եղլ. Պատմ.
Գ, ԼԺ մասին հետ, կը տեսնուի որ Նոյն է Պա-
պիասի իստորիա (Պատմութեան) գրութեան հետ,
վասն զի ոչ աս եւ ոչ ան կ’ընթեանուն “կին
մի շարժեալ է շնորհաւ.” (γυναῖκα ἐν μοιχαλ
χαταειγµενήν), այլ երկուքն ալ “կին ոմն բաւ-
բասեալ մեղք” (γυναῖκα ἐπὶ ἡµαρτίας διε-

βληθεῖσα·): Ինչպիսիք այս տողերը հրատարակեք
“Հաղորդի” մէջ, եւ ինծի ծանօթացնեք
թէ այսպիսի բնագիր մը կը գտնուի արեւելք
որեւ հայերէն ձեռագրի մը մէջ:

Ողջ լըր բարեկամ իմ:

Կ. ԿՐԻՍՏԻՐԻ



Գ Ր Ա Վ Ա Ն

Մ. ԽՈՐԵՆԱՅԻՆ ԸՍՏ ԴԻՍԻՊԵՆՏԱՊԵՏ Ն. ՄԱՐԻՔ

Ֆրանսիացի գիտնական Ա. Կարրիէր վեր-
ջին տարիներս քննական յօդուածներ է հրա-
տարակում Մոսկէս խորենացու Պատմութեան
մասին: Սրանից քսան տարի առաջ (1877 թ.)
Գուաշմիտ ցոյց է տուել խորենացու Պատմու-
թեան անկատարելութիւնը. այժմ Ֆրանսիացի
գիտնականը, որպէս հայագէտ, առանց պատ-
ճառաբանութեան ընդունում է գերմանացի այդ
քննադատի պնդան ենթադրական բացասական
եզրակացութիւններն որպէս ապացուցում: Եւ
լինովն համոզուած թէ գլխաւոր բանը կատա-
րուած է, զբաղում է մանրամասնութիւններով:
Դա իւր 1891 թուի հրատարակած Moise de
Khoren et les Généalogies patriarcales (Paris)
գրքովի մէջ հանգամանորէն ապացուցանում է,
որ Մ. խորենացին ինքը առաջինը գիտմամբ, իւր
կարծիքը հաստատելու համար ֆամի եւ Յա-
բէթի ազգաբանութեան մէջ որպէս նախնիք
գնում է Մեսրոպիսին եւ Թերասին. եւ որովհե-
տեւ հիմունքներով Մարաբասի (ինչպէս կը առ-
նենք Կեղծ-Մարաբասի կամ Կեղծ-Մարաբի)
վրայ, խորենացին Թիրասին համապատասխանող
համարում է Սիրաթին, որ Ս. Գրքի անունն մի
հասարակ տառափոխութիւնն է, ուստի, պարզ

* Ուսուցչական Ն. Մարի խորենացու վրայ գրած
այս յոդուածները կը ծանօթացնենք մեր ընթերցողաց
թարգմանութեամբ Պր. Ն. Լալայանից: Ուսուցչական
վերնագրին է O аналитическій исторіи Арменіи Апохана. Къ
вопросу объ источникахъ исторіи Моисея Хоренскаго
По поводуъ хронологическихъ статей проф. А. Саггюега (ի թըր-
թէն “Византийский Временникъ” 1894 II. Англичанский
ժամանակագիր): Անտոնովի հայոց նախնական պատ-
մութեան մասին. Մովսէս խորենացու պատմութեան
աղբիւրների նաքի վերաբերմամբ. Պրոֆեսոր Ա. Կար-
րիէրի ընդական յօդուածների աղբիւր: Գրքը պրոֆ.
Մարի: — Ուսուցչական Գ. խալաթեանցի նոյն նիւթը
վրայ մտնող գրած ալ կը շանանք Նոյնպէս ծանօթա-
ցնել ժամանակին: խՄԲ.

Թարգմանութիւնը անս Բաղմալէս 1891, էր.
278 է.:

¹ Արխան է Թ. 980 ըստ “Մայր Երգոցի”, որմ
խաւրսն է հայագէտն պատմակի մ’ալ տրիմարած “Հեր-
մէս”, իմաստաբերին գրութեանն: Ասոր վրայ ուրիշ աղբիւր:

² Հայագէտը կ’ստորագրէ իւր մէկ յօդուածը, զոր
պիտի ծանօթացնենք մեր ընթերցողաց: ԹԳԳՄ.

³ Այսպէս էր գրուած: ԹԳԳՄ.

⁴ Զեռն իմաստը պատարայ: ԹԳԳՄ.

⁵ Այսպէս է Եւսեբիոսը եղլ. Պատմ. Գ, ԼԺ տեղի
հայերէն նախնաց թարգմանութիւնը (տպ. Վնեմ. 1877,
էջ 231.): “Բայց գրեց (Պապիաս) շարժեալ պատմութեան
վասն կնոջ մի, որ Բաղդադէս Բաղաւ մըդ, ի ժամանակի
մեղքեա. Զեր մեր յայնարհի էր: ԶՆ տղն այս գրեալ է
յաւորաբար մէկ Հերմիոնից:”, Հայագիրիս հասակաւորսն
այլ արեւմտեան վէճ մը շարժեցաւ ի լարէն որո՞ւ մէջն էին
վիշիւն ին ժառանգորդ է, կ’ընթեանուն: ԹԳԳՄ.

է, որ Մարբաւս ու խորենացի միմեանց շատ մօտ անձնաւորութիւններ են, արաք միեւնոյն անձի երկու անունն են: Սրանց հետեւում է Մովսէս խորենացու բարեկողմութեան մասին բաւական ողբալի, թէեւ Կարբէրի կողմից լուսնութեան տուած եղբակցութիւն. պատմագիրը նա հասկանալի ազգաբանութեան առթիւ շատ անգամ յայտնում է, որ գրում է ինչպէս գտել է իւր աղբիւրների մէջ. «Թիրաւ չորրորդ իշոյն թէպէտ ըստ մերում թարգմանութեան ոչ ուրեք ի բնագրի գտանք... այլ այսպէս զաւ կարգեալ գտաք ի յուշմանէն ումնէն եւ լընթերցալիւք Ասորոյ, եւ հաւանարիմ թուեցաւ մեզ ասացեսն» (Ա. Ե): Բայց խորենացու այսպիսի արդարացումները անուշադիր են մնում, կամ նրանց պատասխանում են ֆրանսիական կարծ առածով, որ դեռ Գուաշմիտն է ստել Մ. խորենացու վերաբերմամբ. — *qui s'excuse s'excuse*.

Մ. խորենացու Պատմութեան Բ. գրքի 29-ի եւ 2Ը գլուխներն առաջին տեղն են բրուում (1—31) Ա. Կարբէրի վիճանայի Միւթթարեանների ամենագումը ֆրանսերեն եւ հայերեն թարգմանութեանն ստղած յօդուածներում, որ յետոյ առանձին եւս լոյս տեսան այսպիսի խորագրով. «Nouvelles sources de Moïse de Khoren. Études critiques par A. Carrière, professeur à l'école des langues orientales vivantes, directeur-adjoint à l'école des hautes études. Vienne 1893, երես 56. (Կորագոյն աղբիւրը Մովսիսի խորենացոյ. քննադատական ուսումնասիրութիւնը Ա. Կարբէրի, ուսուցչական յուսումնարանի Արեւելեան կենդանի լեզուաց, Օմանդակ-Վարիչ Ուսումնարանի Բարձրագոյն Ուսմանց ի Փարիզ): Մ. խորենացու գրքի յիշեալ գլուխները նուիրուած են Կոստանդինոս Մեծի պատմութեան, Կոստանդինոսի եւ սրա ու իիկիանոսի յարաբերութիւնների մասին աւանդուած բոլորովին անձիշտ տեղեկութիւնները շատ նման են երեւում մէկ կողմից Սեղեբաստու Պապի, միւս կողմից Ս. Բասիլիոսի վարքի մէջ պատմութեանը: Մի քանի տեղերում բնագիրների նմանութիւնը սաստիկ աչքի է ընկնում: Հայերենի մէջ տեղ տեղ սխալներ են երեւում, որ սուղապէս են յուսակաւ բնագրից առնուելու: Սակայն Ա. Կարբէր չի կարծում, թէ Մ. խորենացի Ս. Բասիլիոսի վարքի բնագիրը կամ թարգմանութիւնը իբրեւ անկախ աղբիւր գործածած լինի: Կրան աւելի հաւանական է թւում, որ Մ. խորենացի

օգտուել է Սոկրատի Եկեղեցական Պատմութեան հայերեն թարգմանութիւնից, որ բաղմալթիւ յետամուտ ընդմիջարկութիւնների է կրել: Այսպիսի ընդմիջարկութիւններից մին էլ, ի միջի այլոց, Սեղեբաստու պապի վարքն է, որով սկսում է Սոկրատի հայերեն թարգմանութիւնը: Այսպիսով, Մ. խորենացի իւր Պատմութեան Բ. գրքի 29-ի եւ 2Ը մասամբ 28-ի գլուխները գրելիս օգտուել է Սոկրատի Եկեղեցական պատմութեան հայերեն թարգմանութեան մէջ արդէն հաւաքուած պատրաստի նութից: Ընդհանուր առմամբ, թէ այս եւ թէ ուրիշ, մանաւոր գաւանացիների Ափրիկէ գաղթիւր հարցի վերաբերմամբ, որի մասին խօսելու ենք, փաստական կողմը շատ վաղուց յայտնի էր, հէնց Մ. խորենացու պատմութեան 1736 թուի առաջին, լատինական թարգմանութեան ժամանակ, սակայն ֆրանսիական գիտնականին պատկանում է այն անտարակուսելի ծառայութիւնը, որ նա հարցը երկսպրի է դնում, ուրիս պիտի պատասխանել, կամ յիշեալ տեղեկութիւնները՝ հակառակ յայտնի ապացոյցների կարող էին մտաւել լինել Հայ մատենագիրն դեռ հինգերորդ դարում, կամ Մ. խորենացին ապրում էր աւելի յետին ժամանակում: Ա. Կարբէր այս վերջին կարծիքին է. նա յենում է Սոկրատի Պատմութեան հայերեն թարգմանութեան վրայ, որ յիշատակարանների ստեղծկատարուել է Է դարու վերջում, նա յենում է Սեղեբաստու Պապի վարքից ընդմիջարկութիւնների վրայ, որ Ա. Կարբէր, հետեւելով անցեալ դարու հայ պատմագիր Զամբանին, կարծում է, որ արդէն Հայոց հողի վրայ է մուծուել, հետեւապէս եւ ժամանակի ընթացքում, եւ սրա համեմատ, Մ. խորենացու Պատմութիւնը ութերորդ դարին է վերագրում:

Երկրորդ կէտը Ս. Կոնստանդինոսի լուսաւորչի պատմութեան է վերաբերում: Ա. Կարբէր ցոյց է տալիս Կոնստանդինոսի պատմութեան մասի անմիջական աղբիւրը, այսինքն դարձեալ Սոկրատի Եկեղեցական Պատմութիւնը (Ե դար): Սոկրատ այս կէտում լոկ վերահրկում է Բուսիլիոսի (Դ դար) առանձնը, միայն մի քանի անյաղող յաւելումներով: Բուսիլիոս առաջինն է գրել Վրացիների դարձի պատմութիւնը Վրաց թագաւոր Բակուրի բերելը լսելով, բայց կարող էր աւանդութիւններ լինել այնտեղ, որտեղից գաղթել էր ինքը Վրաց թագաւորը, եւ անկախ արեւմտեան մատենագիրներից՝ Հայ պատմագիրը կարող էր ծանօթ լինել այդ տե-

ղական, վերական աւանդութիւններն, սակայն Ա. Կարրիէր այս մասին ոչինչ է ասում, հեռ. տեւական եւ չի ընդունում: Դէ՛հ խորենացու աղբիւրները պիտի որոնէ՞ Սոկրատի մէջ, որովհետեւ խորենացին նրա Սեղեքետորի Պատմութեան մասից անպայման օգտուել է, եւ օգտուել է նրա հէնց ընդփշարութիւններով լի, է դարու հայերէն թարգմանութիւնից: Սակայն Սոկրատի եւ Փովսիսի բնագիրների համեմատութեան ժամանակ՝ առաջին անգամ կարգալիս ֆրանսիացի գիտնականը սաստիկ շփոթւում է: Քրիստոնէութիւն ընդունելու պատմութիւնը թէ Բոյն եւ թէ Հայ պատմագրի մօտ գլխաւոր կէտերում միեւնոյն է, սակայն մանրամասնութիւնների մէջ նկատելի տարբերութիւններ կան. Սոկրատի հետ համեմատելով, Փ. խորենացին տեղ տեղ սաստիկ հոծ եւ սեղմ է եւ համաօտութեան պատճառով մինչ իսկ միջին, իսկ ուրիշ տեղեր շատ մանրամասն է, եւ որ հետաքրքրին է, այդ մանրամասնութիւնները ոչ թէ ռճական վարժութիւններ, Ս. Գրիգոր վկայութիւններ, հայրենասիրական մեծանուագներ, Հայոց պատմութեան հետ մերձեցնողներ են, այլ Սցիսէ՛՛ թաղաքի մասին տեղագրական շատ ձիջող տեղեկութիւններ ՝ իւր բնակիչների պաշտած աստուածութեան եւ նրա պաշտման վերաբերեալ հանգամանորէն մանրամասնութիւններ, որ սակայն Ա. Կարրիէրի կարծիքով չի պատմական են: Բայց, խորենացու աւանդած այս պատմութիւն, «ի բաց առեալ քանի մը յաւելումներն» Սոկրատի պատմածի համաօտութիւն է, որին, ի հարկէ, չէ կարելի Համաձայնել: Այսպիսի, իւր եական կէտերում բաւական մանրամասն, ենթադրութիւն անելուց յետ, Ա. Կարրիէր արդէն վերջում յիշում է (եր. 39), որ խորենացին ղու՛նէի Պատմութեան գլխի աղբիւր անուանում է Ագաթանգեղոսին: Բայց Ա. Կարրիէրի կարծիքով, Ե դարու մեր այս մատենագիրը տարօրինակ սովորութիւն ունի յենեփլ Ագաթանգեղոսի վրայ այնպիսի հարցներում, որոնց մեջ հասած Ագաթանգեղոսի պատճէնները շատ թիչ են վերաբերում կամ բոլորովին լուրժեմամբ են անցնում: Այս տեսակետով դուքէ մինը հարկաւոր համարէր թրինը Ագաթանգեղոսի մեջ հասած պատճէնների հարադատութիւնը, սակայն Ա. Կարրիէր այս բանում տեսնում է խորենացու կողմից իւր գործածած աղբիւրների յայտնագործման կեղծումը:

(Հարաւստիք):

ԹԳՊ. Ն. ԼԱՍՅԱՆՍ

ԵՂԻՇԷ՛՛ ՊՈՑՄՈՒԹԵՆՆ ԵՂԻՇԷ՛՛

Սէր հին մատենագրերից նրանք, որոնք յիշում են Եղիշէի վարդանանց պատմութիւնը, ընդունում են, որ նա գրուել է թարգմանիչների աշակերտ Եղիշէի ձեռքով, որը 451 թուի պատերազմին մասնակից էր: Այս տեղեկութիւնը կրկնում են եւ նոր մատենագրերը, իսկ Պրօֆ. Գր. խալաթեանը հիմնուում է այդ տեղեկութեան վրայ եւ Եղիշէով, իրբեւ ժամանակակից պատմիչով, ստուգում է նոյն շրջանի մասին Ղազարի, համեմատարար աւելի յետին ժամանակի պատմիչի, հաղորդած տեղեկութիւնները (Ղազար փարպ. եւ Գործք նորին. Գր. խալաթեան. Մոսկուա. 1883. Գլուխ Գ.):

Թէ՛հ հին եւ թէ՛ նոր մատենագրերի այս կարծիքը հիմնուած է նոյն իսկ Եղիշէի մէջ յիշած մէկ երկու տեղեկութիւնների վրա, որոնք այստեղ առաջ ենք բերում. — 1. «Երում պատահեցաք եւ մէք իսկ ականատեսք լինելով» (էջ 6.) 2. «Ես ինքեմ անձամբ անդէն ի տեղւոյն պատահեցի եւ լուսյ եւ տեսի» (էջ 14.) 3. «Եղիշայ եպիսկոպոսն Վամսունեաց» (էջ 22.) 4. «Սա (խուժիկ) երկրորդեաց մեզ զամենայն կարգաւ» (էջ 142):

Եղիշէի պատմութեան Եղիշեանի եւ գրուելու ժամանակի հարցերը զեռ յարուցում են եւ ուսումնասիրում չեն եւ Եղիշէի պատմութիւնից ընդօրինակած այս տեղեկութիւնները կարօտում են ստուգութեան: Մեր ուսումնասիրութիւնը, որ յիշեալ հարցերի մասին առաջին է, այդ տեղեկութիւններին բոլորովին հակառակ եզրակացութիւն անելու հիմքեր է ներկայացնում, ինչպէս թիչ յետոյ կը տեսնեք: Այդ հիմքերի համաձայն սխալ է Եղիշէի վարդանանց պատմութիւնը՝ 451 թուի պատերազմին մասնակցող անձին, Եղիշէին վերագրելը: Նրա հեղինակը ուշ ժամանակի պատմիչ է եւ իւր ձեռին ունեցել է գրաւոր աղբիւր, որից օգտուել է: Եւ ահա այս յօդուածում մենք պիտի աշխատենք երեւան հանել այդ գրաւոր աղբիւրի

* Խալաթեանի խալաթեան հատուած կը յանձնէր զամասիրաց ուշադրութեամբ իրեն նոր փորձով՝ Նիշէն ընտրութեան: Որչափ ալ քանի մե կէտ ալ աւագ թէ Նիշէն է զարու կէտերը չէ գրած, ուղիղ կը համարենք: Այս նկատմամբ ուրեք անգամ պիտի խոսինք եւ տեսնենք որ Նիշէն զաւանու աղբիւրներէն մին առաջի մատենագիր ու որուն հայերէն թարգմանութեան առաջին մտնատարաւէս գիտնիք՝ կը ստիպէ զմեզ ընդունել որ Նիշէն անկէն կանոնս է զարուն ծրել վերջ կամ ձ դարուն սկիզբը դրած կրնայ ըլլալ: ՍՄՊ. Եղիշէի Մատենագրութիւնը. Գ. Կենտրոն. 1899: